1913

ԱՂՋԿԱ ՍԻՐՏԸ

(Արևելյան ավանդություն)

Հին արևելքում, մի հին քաղաքում
Ժուկով մի ջահել աղջիկ էր ծաղկում։
Հարուստ էր հերը զալում սիրունի,
Անհուն գանձի տեր ու շատ անվանի։
Բայց սիրո համար խեղճ ու շեն չըկան.
Մի աղքատ տըղա սիրեց աղջըկան,
Աղջիկն էլ նըրան սիրեց կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.
— Կա թե չըկա,
Նա է, որ նա...

— Չէ՛, որ չէ՛, կանչեց ծընողը փարթամ,
Իմ աղջիկն, ասավ, սև հողին կըտամ
Ու մերկ աղքատին աղջիկ չեմ տալ ես։
Ասավ ու կանգնեց էն լեռ քարի պես։
Բայց սիրո համար քար ու սար չըկան.
Սիրում էր գըժված տըղեն աղջըկան,
Աղջիկն էլ նըրան սիրում կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.

— Կա թե չըկա,
Նա է, որ նա...
Սաստիկ բարկացավ հարուստն անկոտրում,
Փակեց աղջըկան մեծ աշտարակում
Իր սիրած տըղից ու կյանքից հեռու.
— Թող էսպես, ասավ, մոռնան իրարու։
Բայց սիրո համար փակ ու բանտ չըկան.
Սիրում էր անվերջ տըղեն աղջըկան,
Աղջիկն էլ նըրան սիրում կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.
— Կա թե չըկա,
Նա է, որ նա...

Տեսավ իր ձեռքին ոչ մի ճար չըկար,
Համառ հարուստը հերսից խելագար,
Իրեն աննըման զավակը միջին,
Կըրակի մատնեց աշտարակն էն հին։
Բայց սերը որտեղ հըրդեհ է ձըգել,
Ինչ անի էնտեղ հըրդեհը մեկ էլ։
Ու թեժ բոցերի սաստկության միջում
Աղջիկն՝ էրվելով ճըչում էր, կանչում.
— Կա թե չըկա,
Նա է, որ նա...

Ու էրվեց հիմքից աշտարակն ահեղ,
Էրվեց նըրա հետ էն սիրունն անմեղ.
Հող-մոխիր դարձավ։ Իր սիրտը մենակ
Չէրվեց հըրաշքով ու սառ մոխրի տակ
Մընաց կենդանի... էն մոխրի վըրեն

Արտասուք թափեց սիրահար տղեն
Ու կորա՜վ, գնաց, հեռո՜ւ, շատ հեռու,
Իր օրը լալու, նրան փընտրելու,
Մենա՜կ, օտա՜ր,
Անմրխիթար...
Ո՜վ քընքուշ գաղտնիք, ո՜վ սիրուն հրաշք.
Էրված աղջրկա սիրտը մոխրի տակ,
Իրեն մոխրի տակ կենդանի էր դեռ —
Ոչ ոք չրգիտեր, ոչ ոք չրգիտեր...
Ժամանակ անցավ էս տրխուր դեպքից,
Արցունքով թրրջված էն մոխրի տակից,
Էն միշտ կենդանի սրտից թրրթրուն
Բուսավ խաշխաշի ծաղիկը սիրուն,
Կարմի՜ր, թեթև՜,
Բայց... սիրտը սև...

Սրգավոր տղան հուսահատ, թշվառ
Շրրջում էր մոլոր աշխարհից աշխարհ,
Չէր գրտնում սակայն կյանքում էլ նրան,
Ամեն տեղ վիշտն էր սիրածի մահվան,
Որ հար, թե՜ զարթուն, թե՜ քընի միջում.
Տանջում էր նրան, անդադար տանջում։
Բայց սիրո համար վերջ ու մահ չրկան,
Տրղի հառաչքը հասավ աղջրկան
Անմահ կյանքում
Էն աշխարհքում։

Հասավ, ու շարժված, կարոտ, կարեկից,
Թրռավ աղջիկը անմեռ աշխարհքից,

Սիրով ու բույրով, թարմ, անուշահոտ,
Երազով եկավ սիրած տըղի մոտ։
— Լըսիր, իմ սըգվոր, լսի՛ր ինձ, ասավ.
Իմ մոխրի տակից մի ծաղիկ բուսավ,
Ու էն ծաղկի մեջ իմ սիրտն է, որ կա,
Կարոտ, խենթ սիրտը ջահել աղջըկա —
Լիքը սիրով,
Երազներով...
Ուժ ունի իր մեջ նա կախարդական
Ու քաղցր արբեցում էնքա՛ն ու էնքա՛ն...
Քամիր ու խըմիր ուժը էն ծաղկի,
Նա քեզ կըփըրկի, նա քեզ կըփըրկի...
Մոռացնել կըտա իմ հուր սերն ու ինձ,
Հեռու կըտանի էդ կոպիտ կյանքից,
Ու կապրես անվիշտ և զըվարթ հոգով,
Կըխնդաս ընդմիշտ անթառամ կյանքով
Ազատ հեռվում,
Երազներում...

Ո՛վ սիրուն հըրաշք, ո՛վ քնքուշ գաղտնիք.
Տըղան էն օրից դարձավ երջանիկ։
Հարբած նվիրական էն ծաղկի ուժով,
Միշտ նոր կարոտով ու նոր աշխուժով,
Իրեն երբեմնի վիշտը մոռացած,
Էս կոշտ ու կոպիտ կյանքից հեռացած,
Ապրում էր ուրախ, ճոխ վայելքներով.
Լե՛ն ու լի սըրտով, անկաշկանդ սիրով
Ազատ հեռվո՛ւմ —
Երազներում...